

JĀNIS JONEVS

JELGAVA
94

ROMĀNS

ՀՏՏ 821.174-31 Ցոնսս

ԳՄԴ 84(4Լատ)-44

Ց-601

Ց-601 Ցոնսս Ցանիս

Ելգավա 94: Վեպ / Ցանիս Ցոնսս.- Եր.: Newmag, 2024.- 288 էջ:

Այս կիսակենսագրական վեպը 1990-ականներին Հատվիայի Ելգավա քաղաքում ապրող սերնդի մասին է, որը փնտրում է իր հայնությունը և ապրում է այլընտրանքային մշակույթի հորձանոտում: Վեպը սկսվում է 1994 թվականի ապրիլի 5-ին՝ Nirvana-ի մենակատար և կիթառահար Կուրտ Քորեյսի մահով: Քորեյսի մահն ազդում է երիտասարդների վրա: Ելգավայում սկսում են լսել ծանր մետայի: Սա նաև այն ժամանակն է, երբ Հատվիան, տնտեսական և տոյիալական ցնցումների միջով անցնելով, վերականգնում էր իր անկախությունը:

Գրքի գլխավոր հերոս Ցանիսը որոշում է այդ տեկտոնական ժամանակներում ապրել այլընտրանքային ապրելսկերպով ու լսել մետայիկա: Հատվիական Generation X-ի համար շոկային ու անսովոր էր հետխորհրդային այս ազատությունը: Այս գիրքը դեռահասության, հասարակության ու համակարգի դեմք բողոքի և հուսահատեցնող ծանծրությի մասին է: Այս վեպը նաև հետխորհրդային երիտասարդության վրա ծանր ռորդի ու գրանժի թողած ազթեցության մասին է:

ՀՏՏ 821.174-31 Ցոնսս

ԳՄԴ 84(4Լատ)-44



Ministry of Culture
Republic of Latvia

L LATVIAN
LITERATURE

The book was translated and published with the support of the Latvian Literature platform together with the Ministry of Culture of the Republic of Latvia.

Գիրքը թարգմանվել ու հրատարակվել է «Հատվիական գրականություն» հարթակի և Հատվիայի Հանրապետության մշակույթի նախարարության աջակցությամբ:

ISBN 978-9939-967-58-5

© by Janis Jonevs, 2013. First published by Mansards in Riga, Latvia
Ցանիս Ցոնսս, «Ելգավա 94» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ծերոք են թերվել հերիսակի հետ կըքած պայմանագրով:

ՀԱՅԿ
94
պետ

ՅԱՆԻՍ ՅՈՒԵՎՈ



Թարգմանությունը լատվիերենից՝
Նաիրա Խաչատրյանի



ԵՐԵՎԱՆ
2024

Բովանդակություն

Գլուխ I	Կրակոց	11
Գլուխ II	Լուսին	75
Գլուխ III	Ապոկալիպսիսից հետո	243

Չորեքշաբթի գնացել էի դահովներով զբոսանքի. սարնիվար էի սահում: Այդ սարը բարձր էր, բայց սահուղին՝ ոչ շատ երկար: Ես չընկա: Բազմիցս սահեցի այդ սահուղով ցած: Ես կուզեի օրերից մի օր գոնե մի անգամ ընկնել:

Գոնոտարինչ: Իրադարձությունների տեսոր, 4-րդ դասարան:

Ամբողջ պատմությոնը հիմնված է իրական դեպքերի վրա:

I

Կրակոց

1

1994 թվականն է: Ֆլանելե վանդակավոր վերնաշապիկներ հագած տղամարդիկ են անցնում: Ելքավան կամացով գվզում է: Ես, գրադարանի դռների արանքում դեռ կանգնած, սպասում եմ, մինչև տղամարդիկ անցնեն գնան:

Մի քիչ վախենում էի նրանցից, ինչպես նաև՝ մնացած ամեն ինչից: Երբ նրանք անցան գնացին, դուրս եկա փողոց և տեսա, որ երկինքը փայլում էր:

Ավելի ստուգ՝ 1994 թվականի ապրիլի 5-ն էր:

Երկու վստահ քայլ անելով՝ տեսա, որ նրանք կանգ էին առել մթերային խանութի մոտ՝ փակելով ամրող մուտքը: Ես վախսկու չէի, ոչ ես ընդամենը չէի ուզում նրանց վիրավորել՝ ցուցադրաբար անցնելով փողոցի մյուս մայթ, ուստի որոշեցի շրջվել ծախս և տուն գնալ ամենակարծ ձանապարհով՝ իրար կապված բազմաթիվ բակերով: Սովորաբար նախընտրում եմ փողոցները՝ թողնելով շենքերի թաքնված բակերը ֆուտբոլիստներին և նմանատիպ ապադասակարգային ավարաներին, բայց այս անգամ համարձակորեն մտա բակ:

Գրադարանի հետևի բակի անկյունում գտնվում էր անհասկանալի նպատակների ծառայող մի յուրօրինակ օբյեկտ՝ ոչ շատ մեծ քարե խորանարդ, որը գուցե դժոխքի հանդերձարանի օդափոխության հորան էր կամ դրա նման մի բան: Եվ հենց այս խորանարդի վրա էին նստում այն մյուսները: Ինձնից մի քանի տարի մեծ դպրոցական խովհան Ուգրոն (դա նրա անունը չէր. ինչպես հարիր է ավագակին, մականուն էր) և ինձ անծանոթ, նրա նման երկուսը: Երեքն էլ ծխում էին:

Ես փորձում էի ուրիշ բանի մասին մտածել և ուզում էի աննկատ անցնել նրանց կողքով: Բայց ո՞ւր էր յե՞:

Խոսակցությունը սկսեց Ուգոն.

— Էս ի՞նչ ակնոց ոնենք:

Երկրորդն էլ նետեց.

— Մ' վազիր, մի՛ վազիր: Խոսելու բան կա:

Ես կանգ առա, շրջվեցի նրանց կողմը, իսկ ձեռքիս գրքերը՝ խղճուկ ու անպաշտպան, նոյնիսկ սադրող թվացին:

Ուգոն դա նկատեց և հարցրեց.

— Ի՞նչ են գրում:

Իսկ երկրորդն արդեն կարգադրեց.

— Արագ պատմի՛ ինչ են գրում:

Մտքովս բազմաթիվ սրամիտ պատասխաններ անցան, բայց ես ընտրեցի կամացուկ «ինչ ասես գրում են»-ը:

Ինձ հարցաքննող երկուսը շրջվեցին դեպի երրորդի: Նա չափչփեց ինձ հայացքով, որը կարծես անհանգստացած թվաց միայն ինձ, և ասաց.

— Ծխախոտ տո՛ւ:

Այդ նոյն պահին հեռվում՝ հազարավոր կիլոմետրեր այն կողմ՝ օվկիանոսից անդին՝ այլ մայրցամաքում, ինչ-որ ձեռք սահեց 20 տրամաչափի Remington-ի վրայով, շոյեց պահեստատուիր, նայեց. այո՛, լիքքավորված է:

Իսկ այստեղ ես թափահարեցի գլուխս, բայց ոչ թե ժլատությունից կամ ատելությունից դրդված, այլ ուղղակի ծխախոտ չունեի:

Երրորդն առանձնապես չտխրեց և ասաց.

— Մի լատ¹ տո՛ւ:

Պատասխաննեցի.

— Չկա:

Եվ որպես ասածիս խղճուկ հաստատում՝ տարածեցի ձեռքերս, ինչի արդյունքում գրքերն ընկան: Նա շարժումով ստիպեց խոնարհվել և մնալ այդպես՝ դեմքով դեպի Ելգավայի հողը, այն հողը, որը մի ժամանակ հավատում էր, որ տիրելու է աշխարհին, և շարունակեց.

— Հիսուն սանտիմ տո՛ւ:

Ես արդեն ազատ ձեռքերս տարածեցի, իսկ նա դարձավ ավելի հարմարվող.

¹ Հատվայի Հանրապետության դրամական արժույթ 1922-1941 և 1993-2013 թվականներին: Համարմեք է 100 սանտիմ (Բոլոր ծանրագրությունները՝ newmag-ի):

— Քսան սանտիմ տո՛ւք:

Այս անգամ ժխտելով ստեցի, իսկ երրորդն ասաց.

— Դե՛, քեզ շատ չեղա՞վ:

Նա ոտքի կանգնեց:

Այստեղ՝ հեռու-հեռվում, հենց նույն վայրկյանին 20 տրամաչափի Remington-ը՝ կրակելու պատրաստ, չրիսկաց, ինչպես ֆիլմերում: Փողն ուղղված էր գլխին:

Այստեղ երրորդն արեց այն միակ քայլը, որը բաժանում էր մեզ իրարից: Ես շատ մոտիկից տեսանրա դոնչը, ու իմ գլխում տագնապի ազդանշան միացավ. շատ կուզեի ուրիշ վայրում լինել:

Այստեղ՝ ուրիշ վայրում, փամփուշող հասավ ձիշտ նշանակետին, կոտրեց գանգը, պատրեց հյուսվածքները: Կրակոցի ձայնը շատ թեթև ցնցեց ոչ հեռու գտնվող լողավազանի ջրի մակերեսը, բայց այն չլսեցին ոչ հարևանները, ոչ մոտակա փողոցների մարդիկ:

Իսկ ես միանշանակ ինչ-որ բան զգացի: Ազդանշանը լրեց, և երաժշտության պես մի բան հնչեց: Թշվում էր՝ ինչ-որ բան է տեղի ունեցել, բայց հայտնի չէր, թե ինչ: Եվ ինչ-որ բան պետք է տեղի ունենար, բայց նաև դա հայտնի չէր: Ես նույնիսկ ուզեցի, որ ինձ ծեծեին կամ գոնե մի անգամ հարվածեին, բանի որ դա գործի կղներ իրադարձությունը: Թեք նայեցի նրանց ուղղությամբ ու սկսեցի քրել ճակատս, ասես ուզում էի ինչ-որ բան հիշել:

Ուզոյն կտրուկ ոտքի ցատկեց և հուսահատ շարժումներով իր վրա սևեռեց մեր ուշադրությունը. կարծես բան էր ուզում հասկացնել: Ավելի ուշ պատմեց, որ պարզ լսել է կրակոցը:

Երկրորդը, որը նստած էր Ուզոյի կողքին, իր հերթին լսել էր երեք ակորդի անստվոր համադրություն, ինչից այնքան երջանիկ զգաց իրեն, այնքան երջանիկ, որ ոչ ավել, ոչ պակաս սկսեց լաց լինել: Նրա մատոների արանքի ծխախոտի գլանակն ընկավ ու այրեց վերնաշապիկը, իսկ դեմքին ծաղկեց հիմարի ժպիտ:

Երրորդը, որը կանգնած էր իմ առջև, միակն էր, որ ոչինչ չէր լսել: Ավելի ուշ նա հենց դա էր համառորեն պնդում: Նա ապուշ էր կտրել իմ դեմքի հանկարծակի մեղիտատիվ արտահայտությունից, շրջվել էր դեպի իր ավազակ ընկերները, որ ցույց տար իմ հիմարությունը, բայց տեսել էր Υ-աձն վեր տնկած ծեռքերով Ուզոյին և ծխացող վերնաշապիկով հիհռացող Երկրորդին: Կատարյալ ֆրուատրացիայի մեջ ընկած՝ Երրորդը

պատմում էր, որ այն երկուսն օգնում էին ինձ հավաքել գրքերս, իսկ ես գետնից բարձրացրել էի դեռ չհանգած զլանակն ու հաճույքով ներս էի քաշում իմ առաջին ծովիսը:

Մեզնից ոչ մեկը ոչինչ չհասկացավ:

Տուն գնացի: Հարբածի էի նման, նույնիսկ գրքերը չեին գրավում: Դրեցի դրանք սեղանին, չխոսեցի տնեցիների հետ, չնայեցի «Փրկարար զանգ»-ի սերիան, նայում էի պատուհանից, հայացքս տարածվում էր Ելգավայի վրայով, մատների ու կրիկներով պատուհանագոգին ինչ-որ ռիթմ էի տկտկացնում: Պարզ էր, որ տնային հանձնարարությունները կատարելու ցանկություն այլևս չկար, և կարիք՝ նույնպես, բայց ինչի կարիք և ցանկություն կար, դեռ պարզ չէր: Երեկոյան երկար մնացի նստած սեղանի մոտ՝ չվառված լրացնուք: Ես իմ սենյակը չունեի, ուստի չվառել կարող էի միայն սեղանի լամպը:

Մի քանի օր անց Ռադիո SWH-ն տեղեկացրեց, որ գտնվել է Nirvana խմբի առաջնորդ Կուրտ Հաֆտեն ինչի դիակը: Առաջին վարկածը, իհարկե, ինքնասպանությունն էր: Ռադիոդիշեյր հայտնում էր իր ցավակցությունն ու հարգանքը, միևնույն ժամանակ՝ հոյս, որ այս տիսուր իրադարձությունը չի առաջացնի երկրպագուների անքնական հոսք, ինչպես դա եղել էր, օրինակ, Ֆրեդի Մերկուրիի մահվան ժամանակ:

Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛:

Ի՞նչ Մերկուրի, մի՛ ստիր, դիշե՛: Ավելի լավ է, ասա՛ Փայլածու:

Դիշեյի հոյսերը չիրականացան: Դրանք նա կարող էր փայփայել 1997 թվականի նոյեմբերին, երբ Մայքլ Հարչենսի տարօրինակ մահվանից հետո INXS-ի երկրպագուների բանակն իսկապես չմեծացավ: Բայց 1994 թվականի ապրիլին մեր կյանքը կիսվեց երկու մասի:

Դետք է մի քանի օր անցներ, որ ես դա հասկանայի, ու արդարանային տարօրինակ տեսքով և անհայտ երաժիշտների մասին թերթերից կտրված ու ինտուիտիվ կերպով հավաքված հատվածները, արբեցնող նյութերի մասին տեսական ու ինքնաքննադատելի հետաքրքրությունը, դեպքեսիվ գեղագիտության կանխազգացողությունները և թափառելու ուղիների պլանավորումը: Առայժմ զգացողություններս տարօրինակ էին, շատ տարօրինակ...

Բայց չէ՝ որ մինչև այդ ես լավ երեխա էի: Ծնողներիս լսում ու չեի հակածառում, լսում էի նաև ուսուցիչներին, լավ էի սովորում և մտածում էի մոտ ապագայում փաստաբանի կամ նախագահի պաշտոնի մասին, որը զբաղեցնելու ընթացքում կարգի պիտի բերեի աշխարհն ու հաղթեի չար մարդկանց: Չատ էի ուզում խելացի, հարուստ և հայտնի դառնալ: Դրանք նույնն են. Եթե մեկը խելացի է, ապա նա համայն մարդկությանը բարիք է բերում, ինչի համար էլ աշխարհը, հասկանալի բան է, փոխհատոսց է լինում նրան դրամով, ծանչմամբ և երջանկությամբ: Միանշանակ նաև գեղեցիկ աղջիկներով, որոնց հետ իմ բախտը դեռ բոլորովին չի բերում: Ես չեմ հավատում խելացի աղջատներին, բարի դժբախտներին ու միայնակներին: Աշխարհը պետք է ճիշտ լինի, և ես ուզում էի լինել ճիշտ մարդ ճիշտ աշխարհում:

Ես անսպասելիորեն հայտնվել էի բարիկադների հակառակ կողմում: Ասես ամբողջ երկարութիգ տասնչորս տարիների ընթացքում կուտակել էի ոչ թե գիտելիքներ կյանքի մասին, այլ ուժեր՝ թախծելու և երազելու ինչոր անհասկանալի ու անփմաստ բաների մասին: Ինչո՞ւ, ինչո՞ւ պետք է ինչոր մեկն ուզի լինել Կուրտ, լինել տիսուր, տիսրեցնել մյուաներին, ամուսնանալ տգեղ լրբի հետ ու սպանվել: Ավելի լավ չէ՝ լինել մեկը Take That-ից, ով ժպտում է, դուր է գալիս գեղեցիկ աղջիկներին և հետև էլ գումար է վաստակում: Իսկ մենք հանկարծ մի ամբողջ խումբ էինք կազմել (ոչ, խումբ չէինք, մենք խմբից դուրս այն մի քանին էինք)՝ հաջողակներին ատող և թափթափուկներին զարմացնող:

Նստում էինք դպրոցի կողմից թփուտում՝ Գնչոնների տան փայտե բարձր շենքի դիմաց, որի պատուհանները իրական չեին, այլ նկարված (այստեղ

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark